ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի մարտի 11-ի
թիվ 68-Ն որոշմամբ հաստատված
“Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ”

# ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

**ՖԻՆՔԱ ՈՒՎԿ**
**Փակ Բաժնետիրական Ընկերություն**
**ՀՀ, ք. Երևան, Ագաթանգեղոս փ. 2ա, հեռ. (+374 12) 55 55 55**
**էլ. փոստ info@finca.am**
**Հաշվետվություն թիվ 5, 11.03.2019թ.**

*“Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ հաշվետվությունում ներառվող տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են և չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել փաստաթղթի ամբողջականությունը”:*

ստորագրող անձինք՝

| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
|---|---|---|---|
| **Անուշ Պետրոսյան** | **Վարչության անդամ, Ֆինանսական տնօրեն** | | 11.03.19 |
| **Լուսինե Սահակյան Հայես** | **Վարչության անդամ, Գլխավոր գործառնական տնօրեն** | | 11.03.2019 |
| **Արտակ Միքայելյան** | **Վարչության անդամ, Գլխավոր հաշվապահ** | | 11.03.2019թ. |
| **Հարություն Չադրյան** | **Վարչության անդամ, Իրավաբանական բաժնի ղեկավար** | | 11.03.2019թ. |

Ստորագրությունները հավաստում եմ՝

| (անուն, ազգանուն) | (պաշտոն) | (ստորագրություն) | (ամսաթիվ) |
|---|---|---|---|
| **Հրաչյա Թոխմախյան** | **Վարչության նախագահ, Գլխավոր տնօրեն** | | 11.03.2019թ |

11 մարտ 2019թ.

# ՏԵՂԵԿԱՆՔ

«ՖԻՆՔԱ» ՈւՎԿ ՓԲԸ Տնօրենների Խորհրդի N 07/2019 որոշում՝

- Հաստատել Ծրագրային Ազդագիրը ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից գրանցումից հետո մեկ տարվա ընթացքում 2,500,000,000 (երկու միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ ծավալով անվանական չփոխարկվող արժեկտրոնային ոչ փաստաթղթային պարտատոմսերի թողարկումը արժեկտրոնների կիսամյակային վճարումների պարբերականությամբ, առանձին փուլերով (տրանշներով):
- Թողարկվող յուրաքանչյուր պարտատոմսի անվանական արժեքը սահմանել 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ:
- Պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացնել «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ տեղաբաշխման համակարգով, ստանդարտ փակ (եվրոպական) աճուրդի անցկացման միջոցով՝ բացառությամբ Ծրագրային ազդագրով սահմանված դեպքերի:
- Յուրաքանչյուր տրանշի թողարկման և տեղաբաշխման ժամկետները, արժույթը, ծավալը, եկամտաբերությունը և այլ էական պայմանները սահմանել Ընկերության Խորհրդի առանձին որոշումներով: